սայ Դատաւորն, այլ այժմ ոչ թողումք. և ապա բողոք բարձին առ Քաղաքապետն՝ չմաքրել զսիւնն ոչ Հայք եւ ոչ Լատինք, եւ խնդրեաց բերել 'ի վաղիւ զվաւերական գրեանս վասն այնր տեղւոյ և դատ վարել ընդ Լատինաց։ Հայք ընդդէմ կացին բանից Քաղաքապետին, զի չէր օրէն յայնժամ թողուլ զԴատաւորն, և դատիլ առաջի քաղաքական իշխանութեան. գուցէ զայրացեալ Դատաւորին ամբաստան լիցի առ Տէրութիւնն, և լինիցի վնաս երկուց կողմանց։ Եւ 'ի գիշերին յայնմիկ Հայք գնացեալ պատմեցին Դատաւորին զպատգամս Քաղաքապետին։ Եւ 'ի վաղիւ անդ կազմեցաւ ժողով մեծ, ուր էր և Քաղաքապետն. կոչեցան անդ Հայք և Լատինք՝ 'ի գիրս զոր մատուցին Լատինք՝ ոչ գտաւ յիշատակութիւն ինչ վասն սեանն, այլ միայն գմբեթն եւ կամարն մեծ. իսկ 'ի գիրս Հայոց յիշատակէր սիւնն, պատկերն և կանթեղն՝ այլովքն հանդերձ, որով պարտաւորեցան Լատինք (յ30 Յուլիսի)։ Բայց 'ի սադրելոյ Քաղաքապետին ոչ իսպառ որոշեցաւ խնդիրն, մինչեւ վերստին կազմեցաւ ժողով (յ3 Օգոստոսի) յորում սահմանեցաւ սիւնն Ս. Յարութեան և ճանապարհ եկեղեցւոյն Բեթղեհէմի գոլ իրաւունք Հայոց. զայրացեալ ընդ այս Լատինաց սկսան խօսիլ բանս անպատեհս զժողովոյն, եւ սպառնային նոցա չարիս 'ի Թագաւորէն և 'ի Կուսակալէն, և մեկնեցան անտի։ Եւ ժողովն պատուիրեաց երկուց վանաց յարգել զվճիռ ժողովոյն և ըստ այնմ վարիլ։ Հայք առին զերկուս Հէօճմէթս 'ի մի օրինակ ստորագրութեամբ այլազգեաց. բայց Դատաւորն կասկածէր 'ի Քաղաքապետէն և 'ի Լատինաց, զի մի չարախօս լիցին առ Կուսակալն և առ Դեսպանն Գաղղիոյ 'ի Կոստանդինուպօլիս։ Եւ ապա առին 'ի նմանէ զայլ իմն գիր, զի մի Լատինք ժողովրդովք իւրեանց անցանիցեն 'ի վերայ սրփոցացն Հայոց, և ըստ մտաց նորին գիր մի եւս 'ի Քաղաքապետէն։

Սակայն Լատինք անսաստ գտեալ հրամանին վերստին մաքրեցին զսիւնն. Հայք բողոք բարձեալ առ Քաղաքապետն եւ առ Դատաւորն, բացայայտ ասէին լինել նոցա համախոհ Լատինաց՝ եւ դատաստանք նոցին առ երեսս. բողոքել առ Տէրութիւնն և յայտ յանդիման կացուցանել